ՇԻՐԱԿԻ XVIII—XIX ԴԱՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿՈՄՊԼԵՔՍԸ

Ս. Ղ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Բնակիչների կենցաղային առօրյա պահանջմունքները ղուգակցելով հարմարավետության ու տնտեսվարության, ինչպես նաև էսթետիկական-գեղարվեստական պահանջների հետ, Շիրակի կառուցող վարպետները առանձին դեպքերում ստեղծել են «ծածկված բակով կոմպլեքս տների» ճարտարապետական կոմպոզիցիոն լուծումների օրինակներ։ Դրանցից շատերը իրենց մեջ կրում են ճարտարապետական նշանակալի առաջադիմական գծեր, որոնց գիտական ուսումնասիրությունը և քննադատաբար օգտագործումը կարող է օգտակար լինել մեր ժամանակի ավանային և գյուղական շինարարության զարգացման շահերի տեսակետից։

Մինչև 1960-ական թթ. Լենինականի (նախկին Ալեքսանդրապոլի) հին թաղամասերում և նրա շրջակայքի գյուղերում անաղարտ կերպով պահպանվում էին գյուղական բնակարանների հին օրինակներ, որոնք իրենց հատակագծային և կառուցապատման սկզբունքներով որոշակի հետաքրքրություն էին ներկայացնում։

Մեզ հաջողվել է չափագրել տարբեր սոցիալական խավի ու զբաղմունքի տեր մարդկանց մոտ երեք տասնյակի հասնող բնակելի կոմպլեքսներ՝ իրենց նախնական կառուցապատումով։ Այդ նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հետևելու գյուղական տիպի բնակելի կոմպլեքսների հատակագծային և կառուցապատման պատմական զարգացման ընթացքին։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ XVIII—XIX դդ. Շիրակի (Լենինական քաղաքի ու նրա շրջակա գյուղերի) բնակելի կոմպլեքսների կառուցապատման տարածված տիպն է եղել չորս պատերի մեջ ամփոփված տունը՝ հայկական ժողովրդական ճարտարապետության մեջ հայտնի գլխատունը[1], բնակելի, երկրագործական և կենցաղային համապատասխան բաժիններով, առջևում ունենալով տնտեսական բակ։ Տունը արտաքին սրահ (կամ պատշգամբ) չի ունեցել, իսկ բակը երբեմն ձուլվել է փողոցին։ Գյուղական տնամերձ հողամասերի այսպիսի կառուցապատման հետևանքով մի շարք ճանապարհորդներ նշում են հայկական գյուղերում փողոցների բացակայությունը[2]։

Ալեքսանդրապոլի 1860-ական թթ. տեսքը պատկերող մի հին գրավյուրայից (որը կատարել է գերմանացի նկարիչ Կեստները) նկատվում է գյուղատիպ բնակարանի կառուցապատման որոշ օրինաչափություն։ Կոմպլեքսի մեջ տունը հանդիսանում է միակ ծավալային կառույցը, որտեղ համախմբված են

---

1 *Տե՛ս Ա. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. II, Երևան, 1941, էջ 210—216։*

2 *Տե՛ս Ս. Վարդանյան, Հայկական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959, էջ 26—33։*

տան բոլոր օժանդակ բաժինները (գոմ, մառան, ամբար և այլն)։ Որոշ տների կազմում նկատվում են տնտեսական բակեր, սակայն դրանցից ոմանք, մասամբ կամ ամբողջությամբ, շրջափակված են պարիսպներով, որոնց մեջ տեղակայված են փողոցից բակ տանող մուտքերը[3]։ Փողոցները անկանոն են, նրանց կողմն են ուղղված տների և պարիսպների խուլ պատերը։ Տների մեծամասնությունը զուրկ է լուսամուտներից։ Չնայած տների կուտակվածության, մուտքի դռները և երբեմն նկատվող լուսամուտները ունեն որոշակի կողմնադրում՝ դեպի արևելք կամ արևմուտք։ Բնորոշ են տների երդիկավոր դմբեթաձև ծածկերը և մուտքերի առաջամասերում բարձրացած աթարի բուրգերը, խոտի և հարդի դեզերը, տանիքների վրա բարձրացող ծխնելույզները։

Չնայած քաղաքի XIX դարի առաջին կեսի գյուղատիպ տները հիմնականում կրկնում են Շիրակի շրջանում XVIII դարում տարածված գյուղական կոմպլեքսների կառուցապատման բնորոշ գծերը, սակայն նրանցից տարբերվում են տնտեսական բակերի պարսպապատ լինելով, որը և հանդիսանում է քաղաքի գյուղատիպ կոմպլեքսների կառուցապատման առանձնահատկությունը։

Հաճախ տան առջևի տնտեսական բակը արդյունավետ օգտագործելու, միաժամանակ և նրա ներքին տարածությունը առավել հարմար ու օգտագործելի դարձնելու նպատակով տան մուտքը և փողոցի դարպասը դասավորվել են միևնույն առանցքի վրա, հողամասի մի եզրում։ Երբեմն տան առջևի բակը ցածր ցանկապատով բաժանել են երկու մասի՝ պարտեզի և սալարկված տարածության։ Հաճախ այդ տարածությունները տեղանքի պատճառով միմյանց նկատմամբ բարձրությունների զգալի տարբերություններ ունեն և կապվում են աստիճաններով։ Բակերի մեծամասնությունն ունի քարով սալարկված դարավանդներ, հարթակներ, անցուղիներ, աստիճաններ, աղբյուրներ, ջրավազաններ ու ջրհորեր։ Քիչ չեն դեպքերը, երբ ջրհորերը կառուցված են ոչ թե բակում, այլ տների ներսում, «ծածկված բակի» կամ խոհանոցի մեջ։ Սալարկված հատակները, որ մշակված են տուֆի երկգույն (սև ու կարմիր) սալերի դեղարվեստական շարվածքով, բավարարել են կենցաղային պահանջները և ապահովել բակերի մաքրությունը։ Երբեմն բակերի մեջ, դարավանդների վրա և պարտեզներում հանդիպում են քարից պատրաստված սեղաններ ու նստարաններ, որոնք դրված են հանգստի համար չափազանց հարմար տեղում՝ ծառերի ստվերում կամ ջրավազանների շուրջը։ Բաղմապիսի հարթակների և անցուղիների, դարավանդների ու աստիճանների առատությունը շատ հաջող լուծում է բակերի ներքին տարածությունը։ Նրանց մի մասը ամռան ընթացքում օգտագործվում էր որպես ժամանցի և հանգստի վայր։

Սովորաբար տները, բոլոր բաժիններով հանդերձ, կառուցված են հողամասի խորքի եզրագծի ամբողջ երկայնքով, տեղանքի թեքության բարձր մասում, ճակատները դեպի սարալանջի ցածրադիր կողմը իջնող ռելեֆի հորիզոնականներին համարյա զուգահեռ։ Բնակելի տան ետևի մասը ուղղված է լինում ստորոտի բարձր կողմին, այնպես որ մեծ թեքության առկայության դեպքում մակերևս է բարձրանում միայն տան կտուրը, իսկ երբեմն էլ տունը ետևի մասով ամբողջությամբ մխրճված է լինում սարալանջի մեջ։

---

3 Տե՛ս Ս. Ղ. Մաթևոսյան, Լենինականի հատակագծումը և կառուցապատումը XVIII—XIX դդ., ԼՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 10։

Հետաքրքիր է նշել, որ տնամերձ հողամասում տների այդպիսի տեղադրում ունենալու դեպքում շատ լավ լուծվել են ջեռուցման, անձրևաջրերի հեռացման և սենյակների լուսավորության խնդիրները։ Տեղանքի մեծ թեքության դեպքում սենյակների հարթ տանիքները արվել են աստիճանաձև, որը հնարավորություն է տվել տանիքների վրա բարձրացող պատերի մեջ կառուցել լուսանցքներ։

Շենքերի վերոհիշյալ կողմնորոշումը պայմանավորվել է բլրալանջերի արևահայաց կողմերը ռացիոնալ օգտագործելու նպատակով։ Հյուսիս ուղղված պատերի մեջ լուսանցքներ կամ բացվածքներ չեն թողնվել՝ հյուսիսից փչող ցուրտ քամիների պատճառով։ Այս ամենը խոսում է այն մասին, որ շիրակցին շատ լավ ճանաչել է իր երկրի բնությունը և մեծ ուշադրություն է դարձրել երկրի կողմերի նկատմամբ բնակելի շենքերի տեղադրմանը. ինչպես ասվեց, դրանց ճնշող մեծամասնությունը ունի միանման կողմնագրում՝ դեպի արևելք կամ դեպի արևմուտք, ըստ որում օժանդակ բաժինները հիմնականում ունեն սենյակների միաշար դասավորում՝ ճակատներով ելնում են ստեսական բակի վրա և ուղղված են դեպի հարավ։

Հատկանշական է, որ տնամերձ հողամասում տան տեղադրման նրշված հատակագծային և կառուցապատման կոմպոզիցիա ունեն XIX դարի առաջին կեսին կառուցված «ծածկված բակով կոմպլեքսներ» խմբին պատկանող կառույցները, իսկ հետագայում նաև XIX դարի քաղաքատիպ բնակարանները[4]։ Նշված տիպի բնակելի տան ամենապարզ օրինակը, որ չափագրել ենք Արևիկ (Նախկին Թափադոլակ) գյուղում, հայտնի է «Փանոսի Ճոշ տուն» անունով։ Այս տունը կառուցված էր ոչ մեծ բլրաթմբի հարավային լանջին, կիսագետնափոր ձևով։ Պատերը բարձրացված էին տեղում բացված խոշոր ժայռաբեկորների վրա, որոնք կազմում էին պատերի ստորին մասը։ Տեղանքի վրա բարձրացող պատերը շարված էին անկանոն ձևի գետաքարերով, կավի շաղախով։ Կառուցվածքը, շնորհիվ գետնի մեջ մխրճված լինելուն և ծածկի արտաքին ձևին, ձուլվում էր տեղանքի հետ, համարյա չտարբերվելով շրջապատի բլրաթմբերից։ Տունը բաղկացած էր մեկ մեծ սենյակից (9,0×9,5 մ) և նախամուտքից։ Սենյակը ծածկված էր փայտագմբեթ ձևով։ Ծածկը նստած էր կենտրոնում կանգնեցված չորս սյուների վրա և ավարտվում էր երդիկով։ Խորքի զույգ սյուների կտրվածքը մեծացնելու նպատակով նրանք կազմված էին երկուական ծառաբներից։ Կենտրոնում բարձրացող փայտագմբեթ ծածկը, տարածվելով դեպի պատերը, ստանում էր հարթ ձև։ Հարթ ձևով էր ծածկված նաև նախամուտքը։ Սենյակի և նախամուտքի ծածկերը իրականացված էին հասարակ գերաններից և երկտապակ ծառաձյուղերից։ Սենյակի ծածկի կենտրոնում թողնված, քառակուսի բացվածք ունեցող երդիկը հանդիսանում էր տան լուսավորության միակ աղբյուրը։ Նրա պրոյեկցիայում հատակի մեջ թաղված էր կավե թոնիրը։ Սենյակի ձախակողմյան խորքի անկյունն առանձնացված էր վառելիքի (աթար) պահեստավորման համար։ Մյուս անկյունում, պատերից մինչև սյունը, փայտյա ճաղերով անջատված տարածությունը փարախն էր։ Մուտքի հանդիպակաց անկյունում

[4] Տե՛ս Ս. Ղ. Մաթևոսյան. Լենինականի XIX դարի քաղաքատիպ բնակելի տները, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 3։

թմբաձև բարձրության վրա դասավորված էին անկողնու պարագաները։ Հողե հատակի մի մասը ծածկված էր հաստ թաղիքներով։ Պատերին և սյուների վրա կախված էին աշխատանքային գործիքներ (գերանդի, մանգաղ և այլն) ու տնային օգտագործման զանազան իրեր։ Աջակողմյան սյուներից մեկի վրա ամրացված փայտյա շեղբին դրված էր նավթի ճրագը։ Ինչպես պատմեց տան ավագը, նախկինում նահապետական ընտանիքը իր ամբողջ ունեցվածքով տեղավորվել էր այս 85,5 քառ. մետր մակերես ունեցող սենյակի մեջ։

Նկարագրված տիպի կիսագետնափոր խրճիթներում ապրում էին հողի դարավոր մշակները՝ չարքաշ հողագործները, բայց այնուամենայնիվ նրանք ունեին գեղարվեստական ճաշակ և ամեն կերպ աշխատում էին ինչ-որ չափով հարդարել բնակարանի ներսի տարածությունը, այն դարձնել հնարավորին չափ հաճելի։ Դրա արդյունքն է, որ կիսագետնափոր այս հյուղակի մեջ էլ նկատվում են ժողովրդական ստեղծագործ մտքի ճարտարապետական բողբոջները. ծխակալած սյուների վրա, նրանց հենակների կողերին և երեսներին պարզ ձևով փորագրված էին զարդաքանդակներ ու արձանագրություններ։

Ունևորների տան ներսի հարդարանքին ավելի մեծ ուշադրություն էր դարձվում, բացի դրանից, տունն ունենում էր լրացուցիչ բաժիններ։ Այսպիսի տան օրինակ կարող է ծառայել Թոփալյանների տունը։ Արևիկ գյուղի մոտ մյուս հին տների նման Թոփալյանների տունը ևս կառուցված էր գետաքարերից և մասամբ սև տուֆ քարից, կավե շաղախով։ Արևմտյան կողմից ազատ էր կառուցումներից, իսկ մյուս երեք կողմերով կից էր հարևան բնակելի կոմպլեքսներին և հարմարեցված էր հողագործական ու անասնապահական տնտեսվարությանը։ Կոմպլեքսը բաղկացած էր ծածկված բակից (որն անվանում էին նաև «մեծ բակ» կամ «շվաք»), նրա խորքում ձգվող երկարավուն միջանցքից «սոխախից», այս երկուսի հյուսիսային երկայնքով միաշար դասավորված ցորենի ամբարից, մառանից («քիլար»), թոնրատնից, «գոմի օդայից» և մեծ ու փոքր գոմերից։ Տունը առջևի մասում ուներ տնտեսական բակ, որն անվանում էին «դրսի բակ» կամ «պասմանոց»։ Դրսի բակը միաժամանակ օգտագործվել է որպես կալատեղ։ 1860-ական թթ. Թոփալյանները իրենց բնակելի կոմպլեքսի արևմտյան կողմում, ցորենի ամբարին կից, կառուցել են առանձին նախամուտքով ևս մեկ սենյակ, որն անվանում էին «դրրսի օդա» կամ «դահլիճ» (նկ. 1)։ Կոմպլեքսի բաժինները ծածկված էին տարբեր կոնստրուկցիա ունեցող փայտե ծածկերով, տանիքները գտնվում էին տարբեր բարձրությունների վրա, մասամբ հարթ էին, ամբողջապես հողածածկ։ Տանիք բարձրանում էին դրսի բակում պատկից կառուցված քարե աստիճաններով։ Երկու գոմերի, սոխախ-միջանցքի և ծածկված բակի հատակները գտնվում էին մի մակարդակի վրա, իսկ գոմի օդայի, թոնրատան և մառանի ու ամբարի հատակները ավելի բարձր էին կառուցված, այսինքն՝ բնակելի մասի հատակները մեկուսացված էին կենդանիների համար հատկացված հատվածի հատակներից։ Անշուշտ դա ունեցել է հիգիենիկ նշանակություն։ Եթե նկատի ունենանք նաև բնակարանի առանձին մասերի ֆունկցիոնալ բաժանվածությունը, ապա «ծածկված բակով կոմպլեքս տունը» մի նոր ու ավելի բարձր աստիճան էր իր զարգացման տեսակետից, քան նախորդ՝ կիսագետնափոր տունը։

Այս տիպի բնակարանի զարգացումը, ինչպես և հետագայում նրա կազմի մեջ տեղի ունեցած վոփոխությունները, սերտորեն շաղկապված են եղել ազգաբնակչության զբաղմունքի, սոցիալական շերտավորման ու տնտեսական վիճակի, միաժամանակ և երկրի բնակլիմայական և այլ պայմաններով: Տնտեսության զարգացման և երկրագործական արտադրանքի կուտակման, իսկ մյուս կողմից՝ տոհմային սկզբունքների վրա հիմնված գերդաստանի



Նկ. 1. Բնակելի տան կոմպլեքս, 1828—1830 թթ.
Արևիկ (Թափադոլակ) գյուղից

կազմի ու նրա անդամների կենցաղային պահանջների աճման և աշխատանքի բաժանման (ըստ սեռի և հասակի) հետևանքով մեկ սենյականոց բնակարանը արդեն չէր բավարարում ընտանեկան կյանքի պահանջները: Կարիք էր զգացվում դուրս գալ այդ վիճակից: Բնակարանի տարածությունն սկսում է ընդլայնվել, իսկ նրա ներքին կազմը աստիճանաբար համակերպվում է տնտեսական սպասարկման նոր պահանջներին: Տունն իր ներքին կազմով ենթարկվում է որոշ բարեփոխման, սկսում են կառուցվել բազմաբաժին բնակարաններ, բայց դարձյալ ամփոփված միևնույն ծավալի մեջ, որն ավելի նպատակահարմար էր պատերի և այլ կառուցողական մասերի խնայողության, տաք սենյակներ ունենալու, սենյակների մեջ ներքին կապը պահպանելու և գերդաստանի ունեցվածքը թշնամիներից պաշտպանելու տեսակետից: Այդուհանդերձ, բաժանումների ենթարկված այդ կոմպլեքսն իր ամբողջությամբ անփոփոխ պահպանում էր նախնական բնակարանի (գետնափոր և կիսագետնափոր) հիմնական մասերը, միևնույն հարկի տակ պահելով մարդկանց ու անասուններին, մթերքի պաշարներն ու աշխատանքային պարագաները:

Շիրակի ցուրտ կլիման, ժողովրդի կենցաղի առանձնահատկություններն ու տնտեսական պայմանները նշանակալի չափով իրենց անդրադարձումն են գտել «ծածկված բակով կոմպլեքս տների» առանձին բաժինների՝ միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ կապի ու դասավորության մեջ. ժողովուրդը մշակել է այդպիսի տների հատակագծային լուծման յուրատիպ սկզբունքներ: Թե՛ Լենինականում և թե՛ նրա շրջանի գյուղերում բոլոր հին տներն ունեն ծածկված բակեր՝ շրջափակված բնակելի և օժանդակ սենյակներով ու բաժիններով: Վերջիններիս համապատասխան մուտքի դռներն ու բացվածքները ելնում են անմիջապես ծածկված բակի մեջ, այնպես որ բոլոր բաժինները միմյանց

հետ կապ են հաստատում այդ բակի միջոցով։ Սա մի առանձնահատկություն է, որով Շիրակի շրջանի տները տարբերվում են Հայաստանի այլ շրջանների բնակարաններից։ Կոմպլեքս տներում ծածկված բակերը, կրկնելով հայկական գլխատան ավանդական ձևերը, ձեռք են բերել նոր բովանդակություն՝ հանդիսանում են տան առանձին բաժինների կապի միջոց, վատ եղանակներին ու ձմռան ընթացքում փոխարինում են դրսի բակին, օգտագործվում են որպես աշխատանքային տեղամաս ու կենցաղային այլ նպատակների համար։

Ծածկված բակերը լինում են տարբեր ձևի ու չափերի, դրանք սովորաբար ունեն ձգված քառանկյան կամ քառակուսի ձև, նեղ ճակատով ուղղված են դրսի բակին և այդ կողմի վրա էլ բացվում է կոմպլեքս տան միակ արտաքին մուտքը։ Գիշերը, փակելով վերջինիս զանգվածեղ դուռը փայտե սողնակով, բնակիչները իրենց ունեցվածքով կտրվում են դրսի կյանքից ու պարփակվում միայնության մեջ։ Հաճախ երկու հարևան տների կից պատերի մեջ (հիմնականում՝ գոմի մասում) հանդիպում են հաղորդակցության գաղտնի անցքեր, որոնցով երկու հարևանները, առանց տնից դուրս գալու, կապ են պահպանել միմյանց հետ։ Անկասկած այդ թելադրվել է ինչպես տեղի կլիմայական պայմաններով, այնպես էլ ժամանակին տիրող անհանգիստ վիճակով։

Ելնելով բնակարանի նոր բովանդակությունից և ծածկված բակի նշանակությունից, ավելի բարձր աստիճանի է հասցվել ինչպես բնակելի սենյակների, այնպես էլ ծածկված բակի ներսի ճարտարապետությունը (նկ. 2)։ Ավելի հասուն է դառնում ներքին ճարտարապետական բովանդակությունը, առանձին մանրամասների նկատմամբ ցուցաբերվում է գեղարվեստական պահանջկոտություն, կենցաղային կարիքների համար ստեղծվում են հնարամիտ հարմարություններ։ Ամեն ինչում զգացվում է կառուցող վարպետների, հատկապես համբավավոր քարտաշների ու որմնադիրների շնորհքը։ Այսպիսի տները իրենց յուրատիպ փայտագմբեթ ծածկերով գրավել են ինչպես հայ, այնպես էլ այլազգի հայտնի գիտնականների ուշադրությունը (Թորամանյան, Ստրժիգովսկի և ուրիշներ)։

«Ծածկված բակով կոմպլեքս տան» ուշագրավ մի օրինակ գտնվում է Լենինականի՝ հնում «Զորի բողազ» կոչված թաղամասում, գետակի ձախակողմյան բլրաշարի արևմուտք նայող զառիվեր լանջին։ Տունը պատկանել է ժամագործ Մուխսի Ավոյին, որը գաղթել էր Կարսից 1830 թ.։ Այս կոմպլեքսը բաղկացած է նախամուտքից, ծածկված բակից (անվանում են «շվաք» կամ ուղղակի՝ բակ), «ներսի օդայից» (անվանում են նաև «չայի օդա»), թոնրատնից, վառելիքի պահեստից, «քիլարից» և «դրսի օդայից» կամ «գահլիճից»։ Ծածկված բակը գտնվում է հատակագծի կոմպոզիցիայի կենտրոնում, բակի երեք կողմերում դասավորված են նշված հարկաբաժինները։ Հատկանշական է, որ թոնրատունը կառուցված է «ծածկված բակից» մեկուսի, չնայած որ նրա հետ հաղորդակցվում է առանձին դռնով։ Թոնրատան այսպիսի տեղադրումը, անշուշտ, բխել է ընտանիքի կենցաղից. այն օգտագործվում էր ոչ միայն հաց թրխելու, ճաշ եփելու և այլ կարիքների համար, այլև տանը հյուր եղած ժամանակ այնտեղ առանձնանում էին կանայք և հարսները։

Կոմպլեքսի մի բաժինը հանդիսացող «ներսի օդան» կամ «չայի օդան» հատակագծում ունի ուղղանկյան (4,05×7,35 մ) ձև, հատակը տախտակամած է, լայնքով բաժանված է երկու մասի, որոնցից ձախակողմյանը 0,5 մետրով բարձր է կառուցված և անվանվում է «բեմ»։ Աջ կողմի խորքի պատի կենտրո-





Նկ. 2. Ծածկված բակերի ներքին տեսքեր Լենինական քաղաքից. 1830 թ.

նում «բեմի» հանդեպ կառուցված է երկու կողմերում գտնվող փոքրիկ «տոլաբներ» ունեցող բուխարի. Բուխարին և հատակի բարձր կառուցված մասը հիշեցնում են դոմի օդաների «սագրերը» և պատի օջախները: Մուտքի աջ կողմում պատրաստված են փայտե պահարաններ՝ «տոլաբներ», որոնցից մեծում պահվում են անկողնի պարագաները, իսկ փոքրում՝ հագուստեղենը: Սենյակի թե՛ ցածր, թե՛ բարձր մասերում պատերի մակերեսը հատակից 0,8 մ բարձրությամբ երեսպատված է տախտակով: Տան այս բաժինը, որ ծառայում է որ-

պես հյուրասենյակ և ննջարան, իր բնույթով ու ճարտարապետական լուծմամբ հիշեցնում է Անիի հարուստների տներում կառուցված՝ բարձր մասեր ունեցող սենյակները, որտեղ ևս սենյակի մի ծայրում կառուցվում էր բուխարի՝ գեղեցիկ մշակված պատրհաններով, իսկ մյուս ծայրում՝ բարձր հարթակ, ուր տան տերը ընդունում էր պատվավոր հյուրերին[5]։

«Ջայի օդայի» բարձր մասից բացվող դուռը կապ է հաստատում «դրսի օդայի» կամ «դահլիճի» բարձր մասի հետ։ Դահլիճի ցածր մասում տախտակապատված է միայն միջնորմի սյունաշարի ճակատային մասը, որտեղ և պատրաստված է փոքրիկ դուռ, որով մտնում են հատակի տակ եղած ցածրիկ նկուղը։ Վերջինիս օդափոխության համար ճակատային տախտակների վրա արված են ծաղկանկար դասավորված անցքեր։



Նկ. 3. Բնակելի տան կոմպլեքս Լենինական քաղաքից, 1830 թ.

Ի տարբերություն ապակեպատ բաժնի, որի առաստաղի գերանները բաց են, ցածր մասի առաստաղը տախտակապատված է, իսկ միջնորմի սյունաշարի խոյակների և հեծանի երևացող երեսները դահլիճի կողմից զարդաքանդակված են։ Ինչպես հայտնի է, այս վերջին սովորույթը կիրառվել է նաև միջնադարյան Հայաստանի պալատական շենքերում (Դվին, Արուճ)[6]։ Դահլիճում կատարվել են բոլոր տեսակի տոնախմբությունները, նրա բարձր մասը օգտագործվել է նաև հյուրերի համար որպես ննջարան և վարագույրով մեկուսացվել է դահլիճի ցածր ու ընդարձակ մասից։

Լենինականում մեր չափագրած «ծածկված բակով կոմպլեքս տան» ամենաբազմաբաժին բնակարանը, այսպես կոչված «Ջիթողցոնց տունն» է, որի սենյակների մեծ թիվը, սրանցից յուրաքանչյուրի ֆունկցիոնալ դերը և այլ հանգամանքներ խոսում են տնատերերի ունևորության մասին (նկ. 3)։ Այս տունը բնութագրվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարդարանքի հարուստ լուծմամբ։ Սրանում հաղթահարված են փողոցի կողմից տան ավանդական ներփակությունն ու խրությունը։ Տան ճակատը, որն աչքի է ընկնում կատարման անմիջականությամբ, գեղատեսիլությամբ և առանձին տարրերի ազատ ձևաստեղծմամբ, ժողովրդական ստեղծագործության ամենահետաքրքիր արտահայտություններից մեկն է։

---

5 Տե՛ս Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 251—279։

6 Տե՛ս Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 63—72։ Նույնի՝ 7-րդ դ. աշխարհիկ ճարտարապետական մի նոր հուշարձան, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), № 8, 1953։

«Զիթողցոնց տան» մեջ մենք արդեն տեսնում ենք մեկի փոխարեն հինգ բնակելի սենյակներ, ընդ որում նրանցից մեկը, իր առանձին նախամուտքով, կառուցված էր երկրորդ հարկում, ելք ուներ դեպի տան հետևի կողմից անցնող երկրորդական փողոցը և տեղադրված էր գետնահարկ «ամբարի» և «քիլարի» վրա։ Չնայած առանձին մուտքի առկայությանը, այս սենյակը «ծածկված բակի» հետ ուներ ներքին կապ, որը իրականացված էր փայտե շարժական սանդուղքի միջոցով, ինչպես նաև երկրորդ հարկի սենյակում, հատակի մեջ կառուցված գաղտնի մուտքով, որը ծածկվում էր տախտակե կափարիչդռնով։ Վերջինս կազմում էր տախտակամած հատակի մի մասը և անծանոթ աչքի համար աննկատելի էր։ Սենյակի այդ մասում հատակին փռված գորգը առանց այն էլ աննկատելի կափարիչ-դուռը քողարկում էր ևս մի երկրորդ անգամ։ Այդ ձևով կանխամտածված հաղորդակցությունը, բացի ֆունկցիոնալ նշանակություն ունենալուց, ծառայել է նաև պաշտպանական նպատակների, քանի որ գլխավոր փողոցից մտնելով «կոմպլեքս տան» առաջին հարկը, կարելի էր «ծածկված բակի» խորքի աջ անկյունում գտնվող շարժական սանդուղքի օգնությամբ բարձրանալ վեր և մտնելով պատի մեջ կառուցված բացվածքը, այնտեղից ելնել երկրորդ հարկի սենյակը, ապա՝ դուրս գալ երկրորդական փողոց։ Այսպիսի հաղորդակցության կազմակերպումը Լենինականի բնակելի տներում եզակի երևույթ չէր։

Ինչպես մեր չափագրած նույնատիպ մյուս տներում, այստեղ ևս տան բոլոր բաժինները և մասերը ֆունկցիոնալ տեսակետից անհրաժեշտ չափով պատճառաբանված են, իսկ գեղարվեստական տեսակետից՝ արտահայտչական։ Բնակելի սենյակների ավելացումը, չփոխելով «ծածկված բակով կոմպլեքս տան» սկզբնական կորիզը, առաջ է բերել ավելի բարդ ճարտարապետական կոմպոզիցիա, արտահայտելով տանտիրոջ սոցիալական վիճակը։ Այսպիսի բնակելի տան օրինակով ստեղծվել է քաղաքի առավել ունևոր դասին պատկանող քաղաքատիպ երկհարկանի (կամ նկուղային հարկով) բնակելի տան նախատիպը։

Պատմական Շիրակին բնորոշ՝ վերևում նկարագրված բնակելի կոմպլեքսները պահպանվել են մեծ մասամբ Լենինականում, որտեղ այլ վայրերի համեմատությամբ ավելի էին հետևում անցյալի ավանդներին։ Վերջիններս իրենց հետ բերել էին քաղաքի բնակիչների հիմնական մասը կազմող գաղթականները, որ այստեղ էին եկել Արևմտյան Հայաստանից՝ 1829 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո։ Այդ ավանդների հետ է կապված նաև Ախալցխայի ու Ախալքալակի և սրանց շրջակա գյուղերի բնակելի կոմպլեքս տների ճարտարապետությունը, որոնց բնակիչները ևս ներգաղթել են նույն շրջաններից։ Ինչպես այս վայրերի, այնպես էլ Շիրակի բնակչությունը կառուցողական արվեստից բացի շատ երկար ժամանակ անաղարտորեն պահպանում էր իր բարքերը, տարազն ու սովորույթները։

ЖИЛОЙ КОМПЛЕКС ШИРАКА В XVIII—XIX вв

С. Г. МАТЕВОСЯН

(Резюме)

В статье исследованы материалы обмеров ширакского народного жилища, выполненных в 1954—1960 гг., дан сравнительный анализ различных типов жилья, показано последовательное развитие его планировочных элементов и архитектурно-конструктивных форм, которые вырабатывались веками, в соответствии с местными климатическими условиями и требованиями народного быта. В ряде случаев они содержат весьма рациональные элементы, которые не утеряли своей жизнеспособности и поныне.